Ալեքսանդր Ծատուրյան

Ես չեմ վրդովվում, որ իմ չորս բոլոր անթափանցելի . . .

Ես չեմ վրդովվում, որ իմ չորս բոլոր անթափանցելի
Տիրում Է խավար խոր տգիտության.
Որ հայ եղբայրըս կարոտ բարիքին լուսավոր դարի,
Խավարի լուծը կըրում Է անձայն:

Ես չեմ վրդովվում... ես հավատում եմ, որ կըգա մի օր,
Ոսկեշող մի օր լուսատու գարնան,
Երբ կըթոթափի նա յուր վրայից փոշին դարևոր,
Փոշին խավարի, մաշիչ ստրկության:

Ես հավատում եմ, որ նորա առջև մի օր ընդարձակ
Կըբացվի նույնպես լուսազարդ ուղին.
Ուր նա կըքայլե դեպի ազատ կյանք անվախ, համարձակ.
Մշտավառ լուսո սուրբ ջահը ձեռին:

Ես հավատում եմ, որ մի նոր կյանքի փառահեղ գարուն
Ե՛վ նորան մի օր կըժպտի պայծառ.
Ե՛վ նորա կյանքի անամպ երկնքում ուրախ շողշողուն
Կարմիր ծիածան կըկապի կամար...

Թո՛ղ այժմ, եղբա՛յր դու տգետ, խղճուկ, տանջվես անպաշտպան,

Քո այդ ստրկական, անզոր վիճակում.
Խորին հավատով երջանիկ օրիդ, գալիք փրկության
Ես հավատում եմ և չեմ վրդովվում…

1880, 13 հոկտեմբերի